

Գյուղական ինքնակառավարման առօրեականության չափումը XIX դարում (Ելիզավետպոլի նահանգի Ղազախի գավառի հայաբնակ գյուղերի օրինակով)¹

Պոդոսյան Վլադիմիր Ա.

Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դասախոս,

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ (Իջևան, ՀՀ)

<https://orcid.org/0009-0001-9581-6453>

vladimir.pogosyan@ysu.am

ՀՏԳ՝ 352, 930; EDN: JRFBBX

DOI: 10.58587/18292437-2024.6-71

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ առօրեականություն, գյուղական ինքնակառավարում, Ելիզավետպոլի նահանգ, «Մշակ» թերթ, տանուտեր, գյուղական ժողով, ինքնակառավարման մոդել

Измерение повседневной жизни сельского самоуправления в XIX веке (на примере армянонаселенных сел Казахского уезда Елизаветпольской губернии)

Погосян Владимир А.

Преподаватель кафедры истории Армении и обществознания

Иджеванский филиал ЕГУ (Иджеван, РА)

Аннотация. Сельская община и ее повседневная жизнь были прямо и косвенно связаны с имперским общественным строем, а новации и волна преобразований, хотя и поздно, достигли сельской общины, затронули основы традиционной среды, создав условия для трансформации системы самоуправления.

Проблемы сегодняшнего опыта укрупнения сельских общин и противоречивые подходы общественности в этом вопросе делают необходимость изучения проблемы актуальной, формируя объективное требование выделить сильные и слабые стороны предшествующих реформ общинного самоуправления.

Стремясь всесторонне исследовать восточноармянский опыт правового регулирования сельского самоуправления, мы обратились к нам с просьбой детально изучить развитие модели самоуправления в XIX веке, выявить роль общинных институтов и степень автономии в рамках законодательных пакетов 1865 и 1866 годов, рассмотреть отношение этнических групп Закавказья к реформе органов местного самоуправления, к системе правового регулирования.

При новом правовом регулировании был обоснован формат формирования сельских обществ, основанный на принципах территориальной пропорциональности, коммуникации, этнической идентичности и других принципах. Значительные юридические полномочия были наделены сельским старостой, который представлял собой не только вождя и лидера сельского общества, но и участкового полицейского, функция которого заключалась в поддержании порядка и эффективности системы безопасности.

Новые изменения в жизни сельского общества сыграли определенную роль, придав активность деятельности его органов самоуправления, а также способствуя расширению сельской повседневности и большей интеграции в нее членов общества.

Четкость прав сельских общин на самоуправление и организационные основы, установленные законом, способствовали оживлению сельской повседневности, привлекая внимание к выявлению сельских проблем.

Ключевые слова и словосочетания: повседневная жизнь, сельское самоуправление, Елизаветпольская губерния, газета «Мшак», сельский староста, сельское собрание, модель самоуправления

Measuring the Everyday Life of Rural Self-Government in the 19th Century (using the example of Armenian-populated villages of the Kazakh district of Elizavetpol province)

Poghosyan Vladimir A.

Lecturer at the Department of Armenian History and Social Sciences

YSU Ijevan Branch (Ijevan, RA)

¹ Հետազոտության իրականացվել է ՀՀ ԳԱԱ ֆինանսական աջակցությամբ՝ «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի» շրջանակներում, ծածկագիր՝ 23-YSSS-017:

Abstract. The rural community and its daily life were directly and indirectly connected with the imperial social system, and innovations and a wave of transformations, although late, reached the rural community, touched the foundations of the traditional environment, creating conditions for the transformation of the self-government system.

The problems of the current experience of the enlargement of rural communities and the contradictory approaches of the public in this matter make it necessary to study the problem relevant, forming an objective requirement to highlight the strengths and weaknesses of previous community self-government reforms.

In an effort to comprehensively explore the Eastern Armenian experience of legal regulation of rural self-government, we asked us to study in detail the development of the model of self-government in the XIX century, to identify the role of community institutions and the degree of autonomy within the legislative packages of 1865 and 1866, to consider the attitude of ethnic groups of Transcaucasia to the reform of local self-government, to the system of legal regulation.

Under the new legal regulation, the format of the formation of rural societies based on the principles of territorial proportionality, communication, ethnic identity and other principles was justified. Significant legal powers were vested in the village headman, who represented not only the leader and leader of the rural society, but also the district policeman, whose function was to maintain order and the effectiveness of the security system.

New changes in the life of rural society have played a certain role, giving activity to the activities of its self-government bodies, as well as contributing to the expansion of rural daily life and greater integration of members of society into it.

The clarity of the rights of rural communities to self-government and the organizational foundations established by law contributed to the revitalization of rural daily life, drawing attention to the identification of rural problems.

Keywords and phrases: daily life, rural self-government, Elizavetpol province, newspaper "Mshak", village headman, village assembly, model of self-government

Ներածություն

Գյուղական համայնքը և նրա առօրեականությունը ուղղակիորեն և անուղղակիորեն փոխկապակցված էր կայսերական հասարակական համակարգին և նորույթն ու բերավոխումների ալիքը, թեև ուշ, բայց հասանում էր գյուղական համայնք, շոշափում ավանդական միջավայրի հիմքերը՝ պայմաններ ստեղծելով ինքնակառավարման համակարգի փոխակերպման համար:

Ժամանակակից գյուղական համայնքի ու գյուղական միջավայրի արդիականացման, խոշորացման միտումներին զուգընթացը կարևոր է ուսումնասիրել գյուղական համայնքների զարգացման, ինքնակառավարման մարմինների ձևավորման օրինափոխությունները, որոնք հնարավորություն են տալիս ոչ միայն պատկերելու գյուղական ինքնակառավարման մոդելը, այլև յուրատեսակ միջոց են հանդիսանում համայնքային առօրեականության դիտարկման, ինքնակառավարման մոդելի արդյունավետության վերաբերյալ գյուղական հասարակության մոտեցումներն ու պատկերացումները բացահայտելու համար: Գյուղական համայնքների խոշորացման մերօրյա փորձառության խնդիրներն ու հանրության իրարամերժ մոտեցումներն այս հարցում արդիական են դարձնում հիմնախնդրի ուսումնասիրության անհրաժեշտությունը, օբյեկտիվ պահանջ ձևավորելով համայնքային ինքնակառավարման նախորդ բարեփոխումների ուժեղ և թույլ կողմերն ընդգծելու, օրինաչափություններն առանձնացնելու համար:

Նպատակ ունենալով համապարփակ հետազոտության ենթարկել գյուղական ինքնակառավարման իրավական կարգավորման արևելահայության փորձառությունը՝ խնդրադրել ենք դետալային ուսումնասիրության ենթարկել ինքնակառավարման մոդելի զարգացումները

XIX դարում, բացահայտել համայնքային ինստիտուտների դերակատարման և ինքնակառավարման աստիճանը 1865 և 1866 թվականների օրենսդրական փաթեթների շրջանակում, դիտարկել Անդրկովկասի էթնիկ խմբերի վերաբերմունքը համայնքային ինքնակառավարման մարմինների բարեփոխմանը, իրավակարգավորման համակարգի ներդրմանը:

Ուսումնասիրության առարկա է հանդիսանում XIX դարի արևելահայ գյուղական համայնքը, իսկ օբյեկտը՝ ինքնակառավարման, համայնքային օրենսդրության ներդրումը գյուղական համայնքում, այս բարեփոխումների ազդեցությունը գյուղական առօրեականության վրա: Հետազոտությունը մեթոդապես հիմնված է պատմական գիտությունների, իրավագիտության համար հիմնարար օբյեկտիվության, պատմականության սկզբունքների վրա, որոնց շրջանակում հետազոտության են ենթարկվում գյուղական ինքնակառավարման համակարգի զարգացման ընթացքն ու նրա ազդեցությունն առօրեական գործընթացների վրա: Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել Ս. Եղիազարովի, Ա. Երիցյանի և այլոց աշխատությունները, որոնցում մանրակրկիտորեն հետազոտված են XIX դարի երկրորդ կեսի արևելահայության համայնքային ինքնավարության առանձնահատկություններն ու խնդիրները: Որպես սկզբաղբյուր օգտագործել ենք «Մշակ» թերթի նամականին՝ առանձնապես ուշադրություն դարձնելով Ելիզավետպոլի նահանգի բնակավայրերի, հատկապես Ղազախի գավառի համայնքներից ուղարկված նամականուն՝ նպատակ հետապնդելով մի տարածաշրջանի և մեկ աղբյուրի համադրությամբ ցույց տալու ինքնակառավարման մոդելի շուրջ ձևավորված առօրեականությունը:

Հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ գյուղական համայնքի ինքնակառավարման փորձառությունը դիտարկվում է հասարակության կողմից դրանց ընկալման, կիրառման և գյուղական առօրյայի բավանդակության փոխակերպման ձևաչափով:

1. Համայնքային կառավարման խնդիրները XIX դարի առաջին կեսին

Արևելյան Հայաստանը Ռուսական կայսրությանը միացնելուց հետո տեղի ունեցան որոշ տեղաշարժեր հողատիրության, գյուղական ինքնակառավարման համակարգում: Գյուղական հասարակության ներսում արտոնյալ դասերի իրավական դիրքի նվազեցման առումով: Պետական գյուղացիների հետ հետ միասին գյուղերում բնակվում էին արտոնյալ խավի ներկայացուցիչներ: Մակայն արտոնյալ խավերի ներկայացուցիչներն իրենց զարգացմամբ և հասարակական ակտիվությամբ քիչ էին տարբերվում ոչ արտոնյալ, հասարակ գյուղաբնակներից:

Արևելյան Հայաստանը Ռուսական կայսրության միացնելուց հետո որոշակի տեղաշարժեր կատարվեցին արևելահայ գյուղական համայնքի սովորությանին և ինքնակառավարման համակարգերում, տեղի ունեցավ գյուղական ինքնակառավարման համակարգի բարելավման փորձ, որի շրջանակում նախատեսվում էր պահպանել ավանդական համակարգի ուժեղ կողմերն ու պայմաններ ստեղծել դեպի նոր համայնական ինքնակառավարման ձևաչափին անցնելու համար:

Պետք է նշել, որ XIX դարի կեսից սկսած գյուղական արտոնյալ խավերին ներկայացուցիչները սկսեցին տուրք տալ կրթությանը, ձևավորել որոշակի մտահղաց միջավայր, բայց պետք է նաև նշել, որ ձևավորվող մտավորականության ներկայացուցիչները հազվադեպ էին բնակությունը շարունակում գյուղական բնակավայրերում, հիմնականում տեղափոխվում էին տարածաշրջանի կամ կայսրության խոշոր քաղաքներ, զբաղվում մասնագիտական գործունեությամբ կամ գործարարությամբ, սակայն պահպանում էին իրենց ժառանգական հողերն ու գյուղական տները, որի մասին տեղական գյուղական շրջանների ուսումնասիրողները տալիս են հստակ տեղեկատվություն, թե որ գյուղում ինչպիսի արտոնյալ խավի ներկայացուցիչներ որքան հողային և կայքային ունեցվածի էին տիրապետում [14, էջեր 79-80]:

Դեռևս խանական գերիշխանության շրջանում Երևանի, Նախիջևանի և Անդրկովկասի այլ խանությունների գյուղական բնակավայրերը կառավարվում էին պատվավոր նախքների կամ մելիքների կողմից: Հայկական գյուղերում նշանակվում էին մելիքները, որոնք իրականացնում էին ստորին վարչական միավորի ղեկավարումը

և որոշակիորեն ունեին դատական և վարչական իշխանության լծակներ, որն իր գործառնությունում համապատասխանում էր ավելի ուշ շրջանի գեղջավագներին [11, էջ 2]: Մելիքները, իսկ մահմեդաբնակ համայնքներում նախքները միջնորդ պաշտոնության կարգավիճակ ունեին և իրականացնում էին վարչական գերատեսչությունների և համայնքի միջև կապը: Հայկական համայնքներում խանական մարմինները ուղղակի միջամտություններ չէին անում և բոլոր հարցերի ու խնդիրների լուծումը վստահում էին մելիքներին՝ հազվադեպ միջամտելով գյուղական առօրեային: Դրանք ժամանակավոր էին, քանի դեռ հավատարմորեն և բարեխղճորեն ծառայում էին իրենց տիրակալին (սերդար, խան) [11, էջ 3]: Միայն պատվավոր մարդկանց, ինչպես նաև նվիրյալ պաշտոնյաներին տրվում էին ցմահ պաշտոններ և այդ դեպքում, իհարկե բարձրագույն իշխանության կամարտահայտությամբ, պաշտոնները կարող էին ժառանգաբար փոխանցվել իրենց սերունդներին [12, էջ 82]:

Անդրկովկասը Ռուսաստանի միացնելուց հետո տեղերում վարչական կառավարման նոր մոդելի ձևավորումը սկսվեց հենց առաջին տարիներից: Ռուսական վերահսկողության սահմաններում բնակվող մելիքներին և բեկերին կարելի է բաժանել երեք խմբի [11, էջ 3]: Առաջինում ներառվում էին ժառանգական, բնիկ բեկերն ու մելիքները, որոնք այս տիտղոսի արժանացել էին պարսից շահի կողմից: Երկրորդը խմբում ներառվում էին խանական ծառայության համար մելիքի և բեկի տիտղոսի արժանացածները: Երրորդը խումբը ներառում էին այն մելիքներն ու բեկերը, որոնք ժամանակավորապես կառավարում էին համայնքները և որևէ իրավական կանոնադրություն չունեին: Այս վերջին կարգի ներկայացուցիչները ոչ այլ ոք էին, քան գյուղի ավագները, նրանց անվանել են նաև կեթխուղներ (թաթարների մոտ) և ռես կամ տանուտեր (հայերի շրջանում): Վերջիններս իրենց տանուտերիության շրջանում հարկերից և տուրքերից ազատվելուց բացի այլ իրավունքներ և պարտականություններ չեն ունեցել, ուստի և չի կարելի նրանց շփոթել ժառանգական մելիքների և բեկերի հետ, չնայած այն հանգամանքին, որ «ժողովրդի մեջ նրանք նույնպես կոչվել են այս տիտղոսներով» [11, էջ 3]:

Ինչպես նշում են XIX դարավերջի ուսումնասիրությունները՝ մելիքների և նախքների հիմնական մասը, որոնք իրենց նստավայր էին դարձրել առանձին գյուղերը, ղեկավարում էին համայնքային ինստիտուտները: Նրանք իրենց սոցիալական կարգավիճակով պատկանում էին գյուղատնտեսական խավին և գյուղական բնակչության հետ զբաղվում երկրագործությամբ և գյուղական այլ զբաղմունքներով: Վերոգրյալ հիմք է հանդիսանում պնդելու, որ դեռևս պարս-

կական տիրապետության շրջանում բնիկ ազնվականական տոհմերը հատուկ դաս չէին կազմում, թեև առանձին տոհմների ներկայացուցիչներ մի քանի սերունդ անընդմեջ ժառանգաբար տիրապետում էին մելիքի, բեկի և այլ տիտղոսների: Վերջիններս, ընդամենը, ծառայող դասի մաս էին կազմում, որոնցից հետագայում ձևավորվեց հատուկ դասը: Ի միջայլոց հայ ազնվականությունը ռուսական ազնվականության շարքերին դասումը տեղի ունեցավ բավականին ուշ, ինչը պայմանավորված էր այն հանգամանքով, որ «հատուկ քաղաքական նկատառումներից ելնելով» [11, էջ 3), ռուսական կառավարությունը առանձնապես վերաբերմունք չէր դրսևորում պարսկական տիրապետության շրջանից մնացած ազնվականության նկատմամբ:

Մեծ էր հայ հոգևորականության ազդեցությունը համայնքում: Հնագույն ժամանակներից հոգևորականությունն իր բոլոր շահերով կապված էր գյուղական համայնքի հետ: Յուրաքանչյուր գյուղական համայնք, կախված իր ծխերի քանակից, կարող էր բաժանվել, մեկ, երկու, նույնիսկ երեք ծխական տարածքի (приход) [2, էջ 918]: Հետաքրքրություն է ներկայացնում նաև համայնքային հոգևորականության ընտրությունը, որն իրականացվում էր աշխարհականների ընտրությամբ, որը հնագույն մոդել էր և պահպանվեց նաև XIX դարում: Վերջիններիս պաշտոնում հիմնականում հավակնում էին գրագետ և հոգևոր կրթություն ստացած համագյուղացիները [11, էջ 5]: Այս հանգամանքով պայմանավորված հոգևորականությունը կազմում էր գյուղական համայնքի անբաժան ու օրգանական մասը և պարսկական տիրապետության շրջանից ծխական հոգևորականն իր ընտանիքի հետ ազատված էր հարկերից և տուրքերից, և մյուս գյուղացիների հետ միասին կիսում էր համայնքային հողի նկատմամբ իրավունքները:

Ռուսական կայսրության շրջանում հայ ազնվականության ձևավորման և կայացման խնդիրները չդիտարկելով որպես հետազոտության առաջնային պահանջ, այժմ դիտարկենք գյուղական համայնքի կառավարչական ինստիտուտների իրավական փոխակերպման խնդիրները՝ պարսկականից դեպի ռուսական կառավարման մոդելին անցնելուն զուգընթաց: Թեև Կայսրությանը միացնելուց հետո Անդրկովկասի կառավարչական կարգերը քանիցս ենթարկվեցին փոփոխությունների, սակայն համայնքային ինստիտուտը պահպանեց իր ավանդական միջավայրի կազմակերպման՝ միայն փոփոխելով ենթակայության, իրավական պահանջների կատարման սկզբունքները:

Տեղական կառավարման մարմինների գործունեության ձևաչափը պահպանվեց մինչև

XIX դարի 60-ական թվականները, չնայած այն հանգամանքին, որ տեղական կառավարչական մարմինները ենթարկվեցին որոշակի կառուցվածքային և իրավական փոխակերպումների՝ մահալային վարչակազմին փոխարինեց տեղամասային ղեկավարությունը, իսկ նահանգների և շրջանների ստեղծումից հետո՝ գավառային և շրջանային/գավառամասային կառավարման ինստիտուտը: Այս հանգամանքով պայմանավորված արդեն 50-60-ական թվականներին նախկին տեղական կառավարչական օրգաններն այլևս չեն հանդիպում¹ [12, էջ 86]:

Նախկինում տեղական և կենտրոնական վարչական մարմինները (մահալական, խանական) չէին միջամտում համայնքի ներքին կյանքին և համայնքային իրավունքի հետազոտող Ս. Եղիազարովի կարծիքով՝ «*հողային հարաբերությունների և հարկերի ու տուրքերի հավաքագրման հարցում համայնքները վայելում էին լիակատար ազատություն*» [12, էջ 86]:

Յուրաքանչյուր գյուղական համայնք ուներ իր դատարանը և վարչակազմը, որոնց մարմինների մեծամասնությունը կազմված էր ընտրված համակարգողներից (mediator), վեքիլներից կամ հավատարմատարներից (повѣренные), ակաակալներից կամ ավագներից [12, էջ 87]: Ինչպես իրավացիորեն ընգծում է Ս. Եղիազարովը՝ կառավարչական գործառույթների և մասնագիտացման բացակայության պայմաններում միևնույն պաշտոնյան և հանդես էր գալիս որպես հողաչափ, կամ հարկահավաք, կամ միջնորդ դատավոր, կամ որպես ոստիկանական մարմնի ներկայացուցիչ:

Այսպիսով, երկրամասի կամ նահանգի ընդհանուր վարչական համակարգում համայնքը ներկայանում էր որպես ինքնուրույն միավոր: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, ամբողջ Ղարաբաղում չկար մի բազմամարդ գյուղ, որտեղ չլինեին համայնքային իշխանության մարմինները՝ գյուղական տանուտերը՝ մելիքը [12, էջ 87]:

Գյուղական համայնքի գլուխ կանգնած էր տանուտերը, անկախ այն հանգամանքից, որ վերջինիս պաշտոնեական անվանումները ունեին որոշակի տարբերություններ՝ քյոխվա, քեղուխա կամ յուզբաշի [1, էջ 29]: Այս պաշտոնն ընտրովի էր, չնայած այն հանգամանքին, որ ժամանակի ընթացքում ընտրությունները վեր էին ածվել ձևական գործընթացի, իսկ որոշ ընտանիքների հաջողվել էր իրենց ձեռքում կենտրոնացնել հիշյալ պաշտոնն ու սերնդեսերունդ փոխանցել իրենց հաջորդներին: Գեղջավազի կամ տանուտերի ինստիտուտը ծառայել է որպես վարչական մարմին, որին

¹ Միայն քոչվոր ցեղերի պարագլուխները պահպանեցին իրենց կառավարչական իրավունքները՝ մինչև 1866 թվականի սեպտեմբերի 28-ի Կանոնակարգի հաստատումը:

ավանդաբար խանր և նրա պաշտոնեության ներկայացուցիչները դիմել են համայնքի ներսում խաղաղության, կարգուկանոնի պահպանման, ինչպես նաև հարկերը ժամանակին հավաքագրելու և վճարելու համար:

Տանուտերը նաև պատասխանատվություն էր կրում ճանապարհների, առուների և կամուրջների պատշաճ պահպանման համար: Այսպիսով, համայնքի բարեկարգության բոլոր խնդիրների կարգավորման հիմնական պատասխանատվությունը ընկած էր տանուտերի վրա: Վերջինս պատասխանատու էր նաև գյուղ այցելած պաշտոնեության պատշաճ դիմավորման և սպասարկման համար: Պետք է նշել, որ տանուտերն իր տարբեր և տարաբնույթ պարտականությունները կիսել է համայնքային այլ պաշտոնյաների՝ ավագանիների և համայնքային վարչությունների այլ ղեկավարների հետ [12, էջ 87]: Այս մարմինները ևս կարևոր դերակատարում ունեին համայնքային կյանքում՝ սկսած հողերի վերաբաշխման գործընթացի կազմակերպումից, հարկերի ու տուրքերի բաշխումից և պարտականության կանոնավոր և ճշգրիտ կատարման վերահսկողությունից:

Գյուղական համայնքն ուներ նաև իր դատարանը՝ կազմված ընտրված միջնորդներից կամ նախագահներից, որոնց գործառույթը վիճելի գործերի խաղաղ լուծումն էր: Մահմանների վերաբերյալ վեճերը, մանր հարցերը, ինչպես նաև իրավախախտումներից բխող դեպքերը: Ինչպես նշում են հետազոտողները, համայնքային դատարանի միջնորդական գործառույթները և նրա իրավունակության սահմանափակությունը հստակություն չեն մտցրել դատարանի իրավասությունների շուրջ [12, էջ 88]:

Համայնքի կառավարման բարձրագույն մարմինը հանդիսանում էր Ժողովը (համայնաժողով, сходъ) [10, էջ 236]: Յուրաքանչյուր համայնքային ծխատեր իրավունք ուներ մասնակցելու ժողովին (ի տարբերություն բուն ռուսական համայնքների [15, էջ 57], բայց առաջնայնությունը պատկանում էր ավագներին, իսկ երիտասարդ ծխատերերը, մեծ մասամբ, մասնակցում էին որպես հանդիսատես: Այս հանգամանքը լիովին համապատասխանում էր համայնքային կյանքի կազմակերպման նահապետական կառուցվածքին: Սովորաբար ժողովը հրավիրվում էր տարեկան երկու անգամ՝ աշնանը և գարնանը, այն ավելի շատ հողերի վերաբաշխման վերաբերյալ որոշումների իրականացման նպատակ էր հետապնդում: Ժողովականները հարցերը որոշում էին միաձայն [12, էջ 89]: Հատկապես բուռն էին հողերի վերաբաշխման հետ կապված ժողովական նիստերը, որոնց հարցերի քննարկումը երբեմն տևում էին ամիսներ: Հարցերի քննարկման հիմնական հարթակ էին հանդիսանում եկեղեցու

բակը, հրապարակները, գյուղի դարբնոցի դեմ, այնտեղ, որտեղ գյուղական հանրույթը համախմբվում էր:

Ժողովական վեճերի և քննարկումները ավարտը փոխգիշումային՝ միաձայն որոշման կայացումն էր: Ժողովները սովորաբար գլխավորում էին տանուտերերը, համայնքային վեճիկները և այլ համայնքային պաշտոնյաներ: Ինչպես նկատելի է նկարագրվածից, համայնքի ներքին կառավարումը կազմակերպված էր պարզ նահապետական սկզբունքներով:

Համայնքային կառավարման ինստիտուտների վերակազմակերպման խնդիրը դրսևաց Ռուսական կայսրությանը միացվելուց հետո: Սկզբում ռուսական կառավարությունը նպատակ ուներ համայնքային կառավարումը իրականացնել պաշտոնահաստատման սկզբունքով: Մակայն XIX դարի 30-ական թվականներից համայնքային տանուտերերի պաշտոնագրադեցման հին կարգը փոխարինվեց նորով, մտցվեց ընտրական սկզբունքն ու իրավունքը, իսկ հին տոհմների ներկայացուցիչները օրենքի ուժով զրկվեցին տանուտիրական պաշտոնները ժառանգելու իրավունքից: Մակայն այս նոր ձևաչափը միանշանակ ազդեցություն չունեցավ, ժողովուրդը, նախկին իներցիայով, շարունակվում էր հին տոհմների ներկայացուցիչներին ընտրել տանուտիրական պաշտոնում: Այս հանգամանքը բացատրվում էր բնակչության պահպանողական վարքագծով և դարավոր ավանդույթների պահպանման ձգտմամբ: Մյուս կողմից, գյուղական բնակչությունը նմիրված էր հին ընտանիքների ներկայացուցիչներ: Հաքսթհաուզենը դեռևս 40-ական թվականներին Արևելյան Հայաստանում նշում է գյուղական վարչակազմեր, որոնք ղեկավարվում էին ժառանգական մեկիքների կողմից [20, էջ 34]:

2. Գյուղական համայնքների ինքնակառավարման բարեփոխումները XIX դարի երկրորդ կեսին և գյուղական առօրեականությունը

Պետք է նշել, որ գյուղական ինքնակառավարման ինստիտուտների հարցը կարգավորվեց 1866 թվականի նոր Կանոնադրությամբ [12, էջ 89], որից հետո գյուղական ինքնակառավարման համակարգը ստացավ դասակարգային բնույթ և բացառվեց նաև օտարների մասնակցությունը հասարակական գործերին:

1866 թվականի Կանոնադրությամբ մի շարք արմատական փոփոխությունների ենթարկվեց համայնքային կառավարման հին համակարգը: Նոր օրենքով չէր կարգավորվում համայնքային իրավակարգը՝ որպես ինքնուրույն վարչաիրավական միավորի: Նոր կարգավորմամբ ձևավորվում էին այսպես կոչված «գյուղական հասարակություններ», որոնք բաղկացած էին մեկ

խտաբնակ կամ մի քանի սակավաբնակ գյուղական համայնքներից: Փոքր, սակավաբնակ գյուղերը խմբավորվում էին մեկ գյուղական հասարակության մեջ [19, էջ 70], չնայած այն հանգամանքին, որ նրանց խնդիրները, նպատակները, տնտեսական շահերն ու առաջնահերթությունները ոչ մի ընդհանուր բան չունեն միմյանց հետ: Շատ հաճախ գյուղական հասարակությունները ձևավորվում էին առանց էթնիկ պատկանելության հաշվի առնման և մեկ հասարակության շրջանում միավորում մի քանի փոքր մահմեդական և քրիստոնյա բնակչությանը բնակավայրերը՝ կենտրոնը դարձնելով բազմամարդ բնակավայրը: Ինչպես նկատում է Մ. Եդիսարովը՝ *«ինչ ընդհանուր բան կարող էր լինել թախտառական քուրդի կամ չորանքյարացու, թարաքյամի և նատակյաց ստորու կամ հայի միջև: Մինչդեռ, այս տարատեստ տարրերով բնակեցված գյուղերը միաձուլվում են մեկ գյուղական հասարակության մեջ»* [12, c. 94]: Էթնիկ պատկանելության սկզբունքի չեզոքացումը Կանոնադրության ամենաթույլ կողմն էր, չնայած նրան, որ մի շարք այլ հարցերի շուրջ պետական կառավարման մոդելը ձևավորում է կայունության՝ համընդհանուր (մոդելային) իրավակարգ սահմանելով անդրկովկասյան գյուղական համայնքներում: Իսառը էթնիկ պատկերով գյուղական հասարակություններ ձևավորվում են նաև Ելիզավետպոլի գավառներում, իսկ Ղազախի գավառում դրա վառ օրինակը Ուզունթալա (այժմ՝ Այգեհովիտ) գյուղական հասարակությունն է, որի չորս բնակավայրերից երկուսը հայաբնակ էին, իսկ հաջորդ երկուսը՝ սուննի մահմեդականներով: 1886 թվականի մարդահամարի տվյալներով այդ գյուղական հասարակության 1567 բնակչից 1320-ը կամ 84 տոկոսը հայեր էին, իսկ մնացյալը մահմեդականներ [13, էջեր 56-57]: Այս գյուղական հասարակության ձևավորման հիմքում ընկած էր տարածքային մերձության գործոնը, որի արդյունքում ձևավորված գյուղական հասարակության ներսում հաշվի չէին առնվել էթնիկ, կրոնական պատկանելիության խնդիրները: Մինևոյն ժամանակ մահմեդաբնակ գյուղերը բազմամարդ չէին (ընդհանուր 247 բնակիչ) [13, էջեր 56-57]՝ առանձին գյուղական հասարակության ձևավորելու համար:

Համայնքային խոշորացման գործընթացը, սակայն, չգրկեց առանձին բնակավայրերի՝ տեղական խնդիրներն ու կարիքները լուծելու անկախությունից: Նրանք կարող էին հավաքվել և առանձին ժողովներում քննարկել իրենց շահերին առնչվող թեմաներ՝ հողօգտագործման կամ բաշխման, պետական և տեղական հարկերի և տուրքերի վճարման և կատարման, կուտակված պարտքերի մարման, բողոքների ու խնդրանքների և այլն համայնքային հարցերի

շուրջ [12, էջ 94]: Այս մասնավոր ժողովներում կրկին պահպանվում էր ավանդական մոտեցումը՝ հողաբաշխման և հողահատկացման հետ կապված: Բայց նաև հստակ էր, որ գյուղական մասնավոր ժողովների որոշումների իրականացումը կախված է գյուղական հասարակության ժողովի² [12, էջ 94] որոշումներից: Ժողովների գումարման հաճախականությունը օրենքով հստակեցված չէր և այն կայացվում էր, երբ կար «անհրաժեշտություն»՝ հիմնականում կիրակի կամ տոնական օրերին [16, էջ 657]: Ժողովական որոշումները, կախված հարցի կարևորությունից, որոշվում էր ձայների բացարձակ կամ հարաբերական մեծամասնությամբ, որոշ դեպքերում էլ ընդհանուր համաձայնությամբ: Ժողովն ուներ լայն իրավունքներ և պարտականություններ, որոնք նույնիսկ նախորդ համայնական համակարգում առկա չէին [12, էջ 95]: Լայն իրավասություններն անդրադառնում էին համայնքային կյանքի գրեթե բոլոր խնդիրներին՝ անգամ «հասարակության վնասակար և արատավոր անդամներին» հեռացնելու իրավունքի իրացումը [16, էջ 658]: Հասարակության ներդաշնակության և համայնքի առողջ միջավայրի ապահովման տեսանկյունից «վնասակար» անդամների հեռացման պրակտիկան իրականացվում էր հնագույն ժամանակներից:

1866 թվականի Կանոնադրությամբ հիմքեր ձևավորվեցին նաև համայնքային դատական մարմնի գործառնության կազմակերպման համար և հին, միջնորդական դատարանի փոխարեն հասարակությանը տրվեց լիովին կազմակերպված, կայուն, որոշակի իրավասությամբ և իրավունակությամբ դատարան:

Պետք է նշել, որ Ժողովի կարևորագույն գործառնություն էր նաև համայնքային պաշտոնատար անձանց՝ տանուտերի, նրա օգնականների (գյուղական հասարակության մեջ ընդգրկված առանձին գյուղական բնակավայրերի համար), գյուղական դատավորների ընտրությունը [16, էջ 658]: Այս համակարգին անցումը սպասելի և ցանկալի էր, քանի որ դեռևս Կայսրությանը միացումից հետո ներդրվել էր համայնքային ղեկավարների ընտրությամբ պաշտոնները զբաղեցնելու համակարգը:

1865 [17, էջ 705] և 1866 [18, էջ 57] թվականների Կանոնադրություններով՝ «Գյուղական հասարակությունների, նրանց հանրային կառավարման և պետական ու հասարակական

² Գյուղական ժողովին մասնակցելու իրավունք ունեին «բոլորը, առանց կրոնական խտրականության», չափահաս գյուղացիները, գյուղական հասարակությանը պատկանող ծխերից, որոնք, ըստ կամերալ ցուցակների, կազում էին առանձին ծուխ, ինչպես նաև ընտրված գյուղական պաշտոնյաները: Ընտրված պաշտոնյաների մասնակցությունը ժողովին բացառվում էր միայն այն դեպքում, երբ գնահատվում էր նրանց գործունեությունը:

պարտականությունների մասին», կարգավորվում էր նաև գյուղական հասարակության կառավարչական մարմինների գործունեությունը: Յուրաքանչյուր գյուղական հասարակության գլխին օրենքով սահմանվում էր տանուտերի պաշտոնը [18, էջ 60], որն ընտրվում էր Ժողովի կողմից: Նոր կարգավորմամբ գյուղական հասարակության մաս կազմող առանձին բնակավայրերն այլև կատավարվում էին Ժողովի կողմից ընտրված տանուտերի օգնականների կողմից: Այս դեպքում նորամուծությունը կայանում էր նրանում, որ նշյալ փոքրաթիվ բնակչությամբ գյուղական բնակավայրերը ոչ միայն զրկվում էին տանուտերից, այլև տանուտերին ենթական նոր պաշտոնյաները կարող էին լինելու երկու տեսակի՝ հասարակական կամ ոստիկանական հարցերով օգնականներ:

Որպես գյուղական հասարակության տարածքում ոստիկանական լիազորությունների իրականացնող՝ տանուտերը պարտավոր էր հայտարարել վերադաս մարմինների, օրենքների և կառավարության որոշումների ու հանձնարարությունների մասին, վերահսկել համագյուղացիների շրջանում «հանրային խաղաղության համար վնասակար կեղծ հրամանագրերի և լուրերի» տարածման բացառումը: Շատ հաճապ այդ առաքելությունն իրականացնելու համար տանուտերը միջնորդում էր վերադաս իշխանություններին տարբեր համայնքային հարցերի լուծման համար, բայց որպես այդպիսին միշտ չէ, որ հաջողվում էր արժանանալ հարցի լուծման, իսկ առավել հաճախ՝ «գաւառապետը մերժել է դրանց խնդիրը» [4, էջ 2]:

Որպես ոստիկանական պետ՝ վերջինս պետք է վերահսկեր հասարակական վայրերում կարգուկանոնը, միջոցներ ձեռնարկել մասնավոր անձանց և գույքը հանցավոր արարքներից պաշտպանելու և դրանց խախտման դեպքում անհապաղ վերականգնելու կարգն ու ատվտանգությունը, նմանօրինակ դեպքերի վերաբերյալ զեկուցեր վերադաս մարմիններին, բերման ենթարկել և ոստիկանություն ներկայացնել թափառաշրջիկներին: Հատկապես կարևորում էր տանուտիրոջ դերակատարումը համայնքում արտակարգ իրավիճակների զարգացման պայմաններում³ [6, էջ 3], որոշակի առումներով վերջինս իր ձեռքն էր վերցնում աղետի հաղթահարման օպերատիվ շտաբի ղեկավարի գործառնությունները: Որպես ոստիկանական պետ՝ վերջինս պարտավոր էր սահմանված միջոցառումներ իրականացնել հանցանքները և զանցանքները կանխելու, իսկ կատարման դեպքում՝ հետքերը պահպանելու, ենթադրյալ հանցագործներին բերման ենթարկելու և վերադաս մարմին-

ներին հանձնելու համար: Այս գործառնությունը հնարավորություն տվեց 1905-1906 թվականներին ազգամիջյան ընդհարումների ժամանակ իրավիճակը վերցնել իրենց ձեռքը և արժանի պատասխան տալ մահմեդական զինված տարրերին՝ ունենալով բավականին նկատելի հաջողություններ Ղազախի հայաբնակ գյուղերի պաշտպանության իրականացման ժամանակ, ինչն առաջացնում էր գավառական պաշտոնյաների «հանդարտեցման» առաքելության ստանձնումը. «Տանուտերներին պ. Լեվիցկին զանազան խրատ տուեց Ժողովրդին խաղաղեցնելու նկատմամբ, դրա համար էլ յատկապէս հրաւիրել էր տանուտերերին երկուական ներկայացուցիչներով» [8, էջ 1]:

Որպես գյուղական հասարակության վարչական կառավարիչ՝ տանուտիրոջ պարտականությունները՝ գումարել և ցրել գյուղական ժողովը, քննարկման առաջարկել համայնքի կարիքներին ու շահերին վերաբերող հարցեր, պահպանել Ժողովի իրականացման պատշաճ կարգը: Կարևոր և հատկապես մեծ վեճերի տեղիք էր տալիս գյուղացիական հողերին առնչող հարցերի քննարկումը և այս ոլորտում տանուտիրոջ պարտականությունն էր վերահսկել գյուղացիական հողերի սահմանային նշանների անխաթարությունը, ճանապարհների, կամուրջների, ոռոգման ջրատարների և այլնի պատշաճ պահպանումն ու օգտագործումը. «Նորընտիր տանուտերի առաջին գործը եղաւ այն, որ սցեղեց իր իրաւաստյօւնանը ենթակայ գիւղերը և տեղերում ընտրել տուեց բանիմաց մարդկանց որպէս գիւղի մարտիւթեան, լուսատրոյթեան և այլ հարցերի պատասխանատու: Նա գիւղումս ձեռնարկեց աղբիւրի վերանորոգութեան գործին, ընտրել տալով 10 հոգուց բաղկացած մի տասնաժողով» [9, էջ 2]: Տանուտիրոջ վերահսկողության ներքո էր նաև հարկերի և տուրքերի պատշաճ հավաքագրումը, իր օգնականների և գյուղական վարչարարների աշխատանքի ճիշտ և ժամանակին կազմակերպումը, անձնագրեր և բացակայության լիազորագրեր տրամադրելու իրավունքը: Կարևոր էր նաև համայնքային այլ կենտրոնների ու կառույցների նկատմամբ վերջինիս հսկողությունը՝ դպրոցներում, հիվանդանոցներում, բարեգործական տներում: Այս առումով պետք է նշել, որ Կանոնադրության հրապարակման ժամանակահատվածում ամբողջ Ղազախի գավառում գործում էր ընդամենը մեկ հայկական դպրոց, որը գտնվում էր եկեղեցու հոգածության ներքո, իսկ հիվանդանոցներ կամ բարեգործական տներ ընդհանրապես բացակայում էին:

Որպես առաջնային իրավունք և պարտականություն՝ տանուտերը կառավարում էր հանրային տնտեսությունը և պետական միջոցները: Համանման պարտականություններով օժտված էին նաև տանուտիրոջ օգնականները,

³ «Թեև տեղական տանուտերը գրել է նոր հարկն է, բայց մինչև օրս ոչ մի բժիշկ նեկալ մեր գիւղը»:

որոնց գործունեության պիրզման համեմատաբար ավելի նեղ էր: Տանուտերի օգնականներն ու գգիրները երբեմն չարաշահում էին իրենց իրավունքներն ու կարգի հաստատման համար դիմում այլ միջոցների. «Այսօր մի գազանային դէպքի հանդիսատես եղայ, որի հերոսը մեր տանուտերի քաջ գգիրն էր՝ իր ամենակարող պլէտով» [5, էջ 2]:

Պետական բոլոր մարմիններն ընտրվում էին ժողովի կողմից և հաստատվում նահանգային կամ գավառային իշխանությունների կողմից: Գյուղական ժողովն իրավասու էր պաշտոնից հեռացնելու կամ օրենքով սահմանված կարգով պատժի հայտ ներկայացնելու ցանկացած պաշտոնյայի նկատմամբ [18, էջ 59]: Պետական կառավարման մարմինները օրենքով սահմանված վարձատրություն չէին ստանում՝ դրա ձևն ու չափը կախված էր ժողովի հետ պայմանավորվածությունից: Ծառայության ողջ ընթացքում, որը տևում էր երեք տարի, պետական պաշտոնյաներն ազատվում էին ծառայողական պարտականություններից:

Պետական կառավարման ոլորտում պաշտոն զբաղեցնելու համար թեկնածուները պետք է լինեին 25 տարին լրացած և դրսևորեին քաղաքացիական բարեխղճություն [18, էջ 65]: Գրագիտությունը կամ կրթվածությունը նախընտրելի էր, սակայն պարտադիր պայման չէր, քանի որ այս ժամանակաշրջանում կրթական գործը հատկապես ազգային փոքրամասնությունների շրջանում կրում էր խիստ հատվածային բնույթ, իսկ համայնքներում կրթված անձանց դերակատարումը հստակ չէր, ուստի կրթություն ստացած անձիք, սովորաբար, չէին վերադառնում իրենց բնօրրան և մասնագիտական գործունեություն էին ծավալում քաղաքային միջավայրերում:

Համայնքային համակարգի արդյունավետության համար օրենքը հստակ սահմանում էր պետական կառավարման բոլոր օղակների իրավունքներն ու պարտականությունները: Չերժ մնալով գյուղական բնակչության ներքին կյանքի չափից դուրս կարգավորումից՝ այն միաժամանակ պայմաններ էր ստեղծում համայնքային կյանքի ձևավորման և բերակարգության համար: Անհրաժեշտ ենք գտնում նաև նշել, որ համայնքային նոր իրավունքների սահմանումը, ինքնակառավարման մակարդակի բարձրացումը նախորդ համակարգի հետ համեմատած բավական դրական և առաջանցիկ քայլ էր, որին գյուղական հասարակության ոչ բոլոր ներկայացուցիչներն էին պատրաստ: Այսօրինակ իրավունակության սահմանումը և գյուղական միջավայրում ծխատերի դերակատարման, ընտրության և ընտրվելու իրավունքի իրացումն անսովոր էր նրա համար և առաջին շրջանում գյուղական հանրույթի դրսևորած

անհետևողականությունն ու ժողովներին իրականացվող խառնաշփոթությունը բացատրվում էր հենց սրանով:

Որքանով էր գյուղաբնակը տեղեկացված օրենքի նոր կարգավորումներին և կարողանում էր իր իրավունքը պաշտպանել, թե ոչ: Հատկապես 1880-ական թվականներին իրականացված ազգագրական և տնտեսական կյանքի հատվածային հետազոտությունները ցույց են տալիս, որ գյուղական հասարակությունը ի շահ իրեն օգտագործում էր նոր հնարավորությունները և գյուղական վարչական ղեկավարությանը, շատ հաճախ, պարտադրում հետևել սահմանված կանոնադրությանը և իրականացնել իր պարտականությունները: Օրինակ, Քարվանսարայի պարագայում նկատում ենք հանրային վերահսկողության փորձառությունը՝ «գաւառապետի օգնական իշխան Մադալով հարկահանության տեսուչը և պրիստաւ Կօրօբիւնի եկան մեր գիւղը՝ տեսնելու և քննելու մեր տանուտերի հաշիւները, որի համար ունանք խնդրամատոյց էին եղել նահանգապետին» [3, էջ 3]: Հասարակության վերաբերմունքի օրինակները և տեղական պաշտոնյաների գործողությունների մասին «Մշակ» թերթում առկա են բազմաթիվ անդրադարձեր, որոնցում ոչ միայն հասարակությունը դժգոհում է առօրեական պահանջներից, այլև ստորին պաշտոնյաների ճնշումներից ու անտեղի խստությունից՝ «ձեծը, արհամարհանքը, անհատական իրաւունքի ոտնատակ տալը, կաշառակերությունները այնքան խիստ են ազդել պարզ շինականի վրա, որ նա գրեթէ բողոքովին մոռանալով իր հին, նահապետական մարդասէր սովորութիւնները և մինչև իսկ սառչելով դէպի իր դարերից ի վեր պաշտած կրօնը, դարձել է մի տեսակ շշմմած ու շուարած արարած» [7, էջ 2]:

Ս.Եղիազարովը կիսում է այն միտքը, որ քսանամյա գործունեության ընթացքում ժողովներն ու համայնքային կառավարման մարմինները կարողացած իրենց շուրջ համախմբել մշակույթի և զարգացման տարբեր մակարդակներում գտնվող հասարակությանը և «հեշտությամբ ու արագ ընտելացնել ինքնակառավարման նման ձևին, որը կարող էր համապատասխանել շվեյցարական համայնքին» [12, էջ 100]:

Դրական և առաջադիմական կողմերից զատ, նոր օրենքով սահմանված համայնքային ինքավարությունը շատ առումներով անհասանելի էր գյուղական հասարակությանը, ինչպես նկատում ենք առկա դիտարկումներից և վերլուծություններից՝ «Կանոնադրությունը մնում էր առանց որևէ գործնական կիրառման» և գործող գյուղական ինքնակառավարման միջոցներն ու մեթոդները ոչ մի ընդհանրություն չունեին օրենքով սահմանված ինքնակառավարման հետ [12, էջ 100]: Օրենքի կիրառության բացերը ավելի նկատելի էին Կովկասի

մահմեդադավան, քոչվող բնակչության շրջանում, որոնց համար ավանդական միջավայրն ու ինքնակառավարման մեխանիզմներն ունեին արմատացած բնույթ: Ի տարբերություն հայերի և Կովկասի այլ քրիստոնեաների, օրինակ եզդիների մոտ նոր օրենքի գործադրումը ոչ մի հեռանկար չունեցավ, քանի որ վերջիններիս համար կարևորված էր ցեղային իշխանության ավանդական մոդելը, որի արդյունքում դատական և վարչական կառավարման նոր մարմինների հետ գործակցությունը նրանց համար դիտարկվում էր որպես խորթ և նվազ ընդունելի:

Ինքնակառավարման նոր մակարդակին անցման անհարթություններն ու ոչ համահավասար ընթացքը շատ հաճախ պայմանավորված էր տարածաշրջանի գյուղական բնակչության մշակութային և քաղաքացիական զարգացման տարբերությամբ: Նոր օրենքի կարգավորումները հատկապես խորթ էին քոչվող անասնապահական բնակչությանը, որոնց մշտական բնակեցումը մեկ տարածքում չէր գերազանցում երեք ամիսը: Ինքնակառավարման մարմինների բարեփոխումներն նկատելի ազդեցություն ունեցան նաև Կովկասի էթնիկ փոքրամասնությունների համայնքային կառավարման վրա, ինչի վառ օրինակը եզդիների՝ «*համայնքային կառույցի ավերակների վրա հայտնվեցին ժամանակակից գյուղական հասարակությունները՝ իրենց դատարաններով ու տանուտերերով*» [12, էջ 100]:

Եթե նոր օրենքն ու նրա կարգավորումները դիտարկենք Կովկասում համայնքային կյանքի համահարթեցման և համասեռման փորձառություն, ապա անհրաժեշտ է դիտարկել, որ այն ամբողջությամբ իրացվել չէր կարող, քանի որ միմյանց մոտ բնակվող, կենցաղ և արժեքներ կիսող ժողովուրդները գտնվում էին զարգացման բացարձակապես տարբեր մակարդակներում, ինչպես նաև ունեին պատմական հիշողության որոշակի շերտ, որն արգելակում էր համագործակցային և մշակութային ամբողջական փոխհարաբերման հնարավորությունները: Այս հանգամանքը հատկապես նկատելի էր քրիստոնյաների (հայ, վրացի) և մահմեդադավանների (կովկասյան թուրքեր) պարագայում, որոնք ունեին թշնամական պատմական կենսափորձ և դարերի ընթացքում հարաբերվել էին տիրապետվողի և տիրապետողի կարգավիճակով: Ինչպես իրավացիորեն նկատում է Ս. Եղիազարովը՝ «*պարտված քրիստոնյա ժողովուրդները, նստած իրենց հայրենի հողի վրա, դարեր շարունակ կույ են տվել վիրավորանքի ու նվաստացման արցունքներ և կրոնական ու քաղաքական տարածայնություններն այս ինքնությունների միջև դարձել են անհաշտ թշնամության պատճառ*» [12, էջ 105]: Չնայած այն հանգամանքին, որ Ռուսական կայսրության տիրապետության շրջանը

մարեցրեց ազգամիջյան հակադրությունները, սակայն ներքին հարաբերություններում չձևավորվեց միջէթնիկ ընդհանրականը, որը կարող էր ցեմենտել միմյանց նկատմամբ դարավոր հակադրություն ունեցող ժողովուրդներին: Այդ ընդհանրականի մոդել կարող էր հանդիսանալ ազրարային հարաբերությունների տնտեսական շահերը, բայց անգամ խառը բնակչությամբ գյուղական հասարակություններում տարբեր ազգությունների ներկայացուցիչները հողն ու ջուրն օգտագործում էին միմյանցից անկախ և ընդհանրական շահերին և հարաբերությունների հնարավորություն չէին ձևավորում:

Իստորը կազմով գյուղական հասարակությունները բաժանվում էին առանձին ազգային համայնքների և, թեև արտաքին կազմակերպմամբ և ազրարային համակարգով վերջիններս շատ նման էին միմյանց, բայց, այնուամենայնիվ, նրանց միջև բացակայում էր ներքին միասնությունն ու հոգևոր կապը: Հաշվի առնելով պատմական անհաշտ փորձառությունը, մշակութային անհարողությունը, իհարկե, չէր կարելի ակնկալել ավելի ներդաշնակ հարաբերություններ առանձին գյուղերի միջև, որոնք «*առանց դավանանքի տարբերության*» օրենքով խմբավորված էին մեկ «*գյուղական հասարակության*» մեջ:

Ինչպես նկատում ենք, ստեղծելով գյուղական հասարակություններ՝ օրենքը նախատեսում էր տեղի բնակչությանը տրամադրել սեփական կյանքը ողջամիտ և հարմարավետ սկզբունքներով կազմակերպելու իրավունք և հնարավորություն: Անշուշտ, ամեն համայնք չէ, որ կարող էր կազմակերպված դատարան և վարչակազմ պահել, հիմնել դպրոց, հիվանդանոց, սակայն առավել բազմամարդ, հանրային համերաշխություն ունեցող համայնքում ընդհանուր առմամբ հնարավոր էր նման հաստատությունների հիմնումն ու պահպանումը: Հայերի, վրացիների պարագայում այսօրինակ հաստատությունների հիմնումը լիովին օրինակալի և հնարավոր էր, իսկ քրդական քառասուն հազարանոց ցեղում ոչ մի գրագետ մարդ չկար, որ կարողանար նույնիսկ մտածել կրթության և գրագիտության մասին: Նույնիսկ մոլլաներն ու շեյխերը, բացի մի քանի անգիտակցաբար անգիր արված աղոթքներից, ուրիշ ոչինչ չգիտեին [12, էջ 106]:

Եզրակացություն

Գյուղական ինքնակառավարման նոր համակարգի ձևավորումը կարևոր քայլ էր տարածաշրջանի հասարակության էթնիկական, մշակութային, տնտեսական ու կենցաղային տարբերությունները համահարթեցնելու և կառավարչական մեկ մշակույթի շրջանակներում միավորելու տեսանկյունից:

Տարածաշրջանի գյուղական բնակչության կյանքի կառուցվածքը, կենսապայմանները զարգացել էին լիովին համադիր ուղղություններով և դժվար թե ստեղծվեր մի համակարգ, որ հավասարապես օգտավետ լիներ հային, վրացուն, նստակյաց թաթարին, իվաշին, խնսուրին, ինչպես նաև քոչվող թարաքյամցուն և չոբանքյարացուն: Հակառակ պարագան ևս անիրատեսական էր, քանի որ չէր կարող իրականացվել այնպիսի վարչատարածքային քաղաքականությունը, որի արդյունքում ձևավորվեին ազգագրական շրջաններին հատուկ, միմյանցից տարբերվող ինքնակառավարման համակարգեր:

Գյուղական ինքնակառավարման եռամսկարդ սկզբունքը՝ Ժողով, տանուտեր և դատավորներ, ըստ էության համապատասխանում էին իշխանությունների անկախ եռաբաժան սկզբունքին և միմյանցից անկախ գործելու հանրավորությունը իրականում կարող էր և ծառայում էր գյուղական հասարակության շահերին և առաջնահերթություններ: Նոր Կանոնադրությամբ՝ ձևավորված ինքնակառավարման մարմինների ընտրության և յուրաքանչյուր համայնական իրավունքը մասնակցելու ընտրություններին մեծապես նպաստեց համայնքային խնդիրների լուծման տեղական նախաձեռնությանը և գյուղական հասարակությունների համար նոր միջոց դարձավ իրենց ներքին և արտաքին խնդիրները արագ լուծելու համար: Նոր կանոնադրությամբ՝ մեծապես կարևորվեց ընտրովի տանուտերի դերակատարումը, այլևս այս պաշտոնի ընտրականությունը հնարավորություն էր ստեղծում բոլոր չափահաս համայնականներին իրացնելու իրենց ընտրության և ընտրվելու իրավունքը:

Ուսումնասիրությունները, «Մշակ» թերթի նամականին տեղային առումով ամբողջացնում են Ելիզավետպոլի նահանգի Ղազախի գավառի գյուղական հասարակությունների ձևավորման առանձնահատկությունների մասին հանրային պատկերացումը, թե ինչպես հասարակ գյուղացին ընկալեց, կիրառեց և առօրեականության շրջանակում տեղայնացրեց գյուղական նոր պաշտոնետության ընտրության իր իրավունքը: Գյուղական համայնքների ինքնակառավարման իրավունքների հստակությունը և օրենքով տրված կազմակերպական հիմունքները նպաստեցին գյուղական առօրեականության աշխուժացման՝ ուշադրություն հրավիրելով գյուղական խնդիրների վերհանմանն ու լավ և վատ կառավարչի վերաբերյալ պատկերացումների ամբողջացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Հայ Ժողովրդի պատմություն**, հատոր 5, խմբ.՝ Աղայան և այլք, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974:
2. **Ղարիբյան Ա.**, Ռուս-հայերեն բառարան, Երևան, Հայաստան հրատ, 1977:
3. Մշակ, 1897, N 141:
4. Մշակ, 1901, N 102:
5. Մշակ, 1902, N 70:
6. Մշակ, 1902, N 83:
7. Մշակ, 1902, N 287:
8. Մշակ, 1906, N 34:
9. Մշակ, 1910, N 32:
10. **Громыко М. М.** Мир русской деревни. - М.: Молодая гвардия, 1991.
11. **Егiazаров С.А.** Административно-экономический строй сельской общины в Эриванской губернии, Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края. Т. 1. - Тифлис : Тип. Я. И. Либермана, 1887-1888. 1887.
12. **Егiazаров С. А.** Исследования по истории учреждений в Закавказье. Часть I. Сельская община. - Казань, типография Императорского университета, 1889.
13. Елизаветпольская губерния. Свод статистических данных извлеченных из посемейных списков населения Кавказа, издание Кавказского статистического комитета, Тифлис, 1888.
14. Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края. - Тифлис: Тип. А. А. Михельсона, 1885-1887. Т. 2. Вып. 3 : Экономический быт государственных крестьян Казахского уезда, Елизаветпольской губернии / исслед. А. Д. Ерицова. 1886.
15. **Осипов Ю.Н.** Крестьяне-старожилы Дальнего Востока России 1855-1917 гг.: Монография. - Владивосток: Изд-во ВГУЭС, 2006.
16. **Положения о сельском состоянии:** Особое прил. к т. 9 Законов о состояниях. - Санкт-Петербург: тип. второго отд-ния соб., 1876.
17. **Полное собрание законов Российской империи.** Собр. 2-е. Т. XL. Ч. 1. 1865.
18. **Полное собрание законов Российской империи.** Собр. 2-е. Т. XLI. Ч. 2. 1866.
19. **Шанин Т.** Неудобный класс: политическая социология крестьянства в развивающемся обществе: Россия, 1910–1925 / Т. Шанин; пер. с англ. А. В. Соловьева; под науч. ред. А. М. Никулина. — М. : Издательский дом «Дело» РАНХиГС, 2019.
20. **Этнография Нагорного Карабаха.** – Степанакерт: Арцахский государственный университет, 2021.

Տճան/Հանձնվել է՝ 28.11.2024

Рецензирована/Գրախիտվել է՝ 05.12.2024

Принята/Ընդունվել է՝ 12.12.2024